Զրույց Այլիշի հետ Սուրբ Հոգու մասին

Այլիշը 12-ամյա աղջիկ է Սինգապուրի արևելյան շրջանից: Մենք նրան հարցրինք, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնում իրեն:



Կպատմե՞ս մեզ քո մասին

Ես շատ եմ սիրում կարդալ և խաղալ վոլեյբոլ, իսկ դպրոցում իմ սիրելի առարկան մաթեմատիկան է: Իմ սիրելի կերակուրը լազանյան է, իսկ իմ սիրելի գույնը՝ կարմիրը: Երբ մեծանամ, հույս ունեմ, որ իրավաբան կդառնամ և կաշխատեմ դատարանում:

Ըստ քեզ, ինչպիսի՞ն է Սուրբ Հոգին

Սուրբ Հոգին ինձ համար մտերիմ ընկերոջ նման է: Ես զգում եմ, որ Նա մեկն է, ում կարող եմ ապավինել, երբ պահում եմ պատվիրաններն ու իմ ուխտերը Երկնային Հոր հետ: Ես մտածում եմ Նրա մասին՝ որպես իմ առաջնորդի և ուղեկցի: Նա կարող է օգնել ինձ՝ ճիշտ ընտրություններ կատարել:

Ի՞նչ խորհուրդ կտաս մեկին, ով վստահ չէ, թե զգացել է Սուրբ Հոգուն

Երբեմն ես էլ վստահ չեմ՝ թե արդյոք զգում եմ Սուրբ Հոգուն: Բայց եթե դուք իսկապես մտածում եք այդ մասին, կարդում եք սուրբ գրությունները, աղոթում եք և լավ զգացում եք ունենում՝ դա Սուրբ Հոգին է: Երբեմն Սուրբ Հոգուն լսելը պարզապես զգացում չէ: Դա կարող է լինել նաև միտք կամ գաղափար: Եթե դուք դեռ շփոթված եք, միշտ կարող եք աղոթել և նորից խնդրել Տիրոջը, որ օգնի:

Նկարազարդումը՝ Մարիա ԹԱԲԻՏԱ. ՀՀԿԵ/ՄԻՀ

Օրինակ, ե՞րբ ես զգացել Սուրբ Հոգուն

Անցյալ տարի ես խաղում էի վոլեյբոլի մրցաշարում: Իմ թիմակիցներից շատերի նման ես էլ լարված էի: Երբ ես սկսեցի խաղալ, մեր թիմն արդեն պարտվել էր առաջին երկու խաղերում: Մենք հուսահատված էինք: Հետո խաղը դիտող մարդիկ վատ խոսքեր ասացին մեզ, և մենք ավելի վատ սկսեցինք զգալ: Մենք պարտվեցինք:



Երբ մայրս հարցրեց, թե ինչպես անցավ խաղը, ես սկսեցի լաց լինել: Ես այնքան հիասթափված էի: Ես գնացի իմ սենյակ, որտեղ հանգիստ ու խաղաղ էր, և աղոթեցի: Աղոթելուց հետո իմ սիրտն ավելի խաղաղ ու հանգիստ էր: Ես գիտեի, որ Սուրբ Հոգին մխիթարել էր ինձ, և որ Նա միշտ կօգներ ինձ: Ես գիտեմ, որ այս տարվա գալիք մրցաշարի ժամանակ Նա ինձ հետ կլինի, երբ ես խաղամ:

Ուրիշ ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնել քեզ

Սուրբ Հոգին նաև օգնել է ինձ, երբ ես տեղափոխվել եմ Երեխաների միությունից Երիտասարդ կանանց դասարան: Ես ոգևորված էի՝ Երիտասարդ կանանց դասարան տեղափոխվելու կապակցությամբ: Բայց միևնույն ժամանակ բավականին լարված էի: Նաև մի փոքր տխուր էի՝ Երեխաների միությունը լքելու պատճառով:

Իմ առաջին դասից առաջ ես աղոթեցի և խնդրեցի Երկնային Հորը օգնել ինձ, որ ինձ լավ զգամ Երիտասարդ կանանց դասարանում: Ես խաղաղություն զգացի սրտումս, երբ մտա իմ նոր դասարանը: Ես պատրաստ էի սովորել: Դա օգնեց ինձ հիշել, որ Սուրբ Հոգին միշտ իմ կողքին կլինի: